



Մամուլի հաղորդագրություն

Եվրամիության աջակցությունը Հայաստանին ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության հարցում

Թողարկման օրը: 29 հունիսի, 2020

Երևան, Հայաստան

Այսօրվանից Հայաստանի և Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության ջրային փորձագետները կանցկացնեն երկօրյա առցանց կարողությունների զարգացման դասընթացներ Հայաստանի Էկոպորտալի կառավարման վերաբերյալ: Դասընթացը նվիրված է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում՝ ջրի վերաբերյալ տեղեկատվության, փոխանակմանը, ռեսուրս, որը կենսական նշանակություն ունի մեր մոլորակի, Էկոհամակարգերի, հասարակության և տնտեսության կենսագործունեության համար: Այս կարողությունների զարգացումը համահունչ է ԵՄ նպատակներին՝ նպաստելու Արևելյան գործընկերության երկրների կանաչ զարգացմանը և թվայնացմանը:

Քանի որ Հայաստանը տարածաշրջանի ջրասակավ երկրներից մեկն է, ջրի օգտագործման արդյունավետությունը և քաղցրահամ ջրերի Էկոհամակարգերի պաշտպանությունը կենսական նշանակություն ունեն: Հայաստանի Էկոպորտալը կաջակցի ջրային հարցերով զբաղվող գերատեսչությունների միջև տվյալների և տեղեկատվության փոխանակմանը՝ երկրում փաստահեն և գիտելիքահեն քաղաքականության մշակման համար:

Եվրամիության աջակցությամբ Հայաստանի ջրի որակի տվյալները ներդաշնակեցվել են Եվրոպայի ջրի տեղեկատվական համակարգի (WISE) ջրի որակի տվյալների բառարանին համապատասխան: Այժմ այն համադրելի է եվրոպական տվյալների բազայի հետ: Նմանապես, ջրի որակի տվյալների հիման վրա մշակված և Էկոպորտալում հրապարակված ցուցանիշները համահունչ են Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության ցուցանիշներին: Դա նշանակում է, որ Հայաստանի, ԵՄ անդամ ցանկացած պետության և Արևելյան գործընկերության տարածաշրջանի այլ երկրների միջև կարող է իրականացվել համեմատական վերլուծություն, օրինակ՝ քաղցրահամ ջրերում կենսածին նյութերի վերաբերյալ:

Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ԵՀԳ ՇՄՏՄՀ II Արևելք) սկզբունքների և գործառնությունների իրականացումն Արևելյան գործընկերության երկրներում



Համակարգի գործառնություններն ու Էկոպորտալի դիզայնը համապատասխանում են WISE համակարգին, որին ԵՄ անդամ բոլոր երկրները իրականացնում են հաշվետվողականություն ջրերի վերաբերյալ իրենց տվյալների և տեղեկատվության փոխանակման մասին: Էկոպորտալը ներկայացնում է ջրի տվյալների շտեմարանները, ցուցանիշները, դինամիկ քարտեզները և զեկույցները: Այն թույլ է տալիս փոխանակել և տարածել ջրային խնդիրներով զբաղվող ազգային գերատեսչությունների միջև տվյալներն ու տեղեկատվությունը՝ Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի սկզբունքներին և գործառնություններին համապատասխան: Քաղաքացիները, փորձագետները, պրակտիկայով զբաղվող մասնագետներն ու ակադեմիական հանրությունն այժմ հասանելիություն կունենան տարբեր տվյալների շտեմարաններին և կարող են համեմատել ազգային տվյալները ԵՄ անդամ պետությունների տվյալների հետ, քանի որ Հայաստանի ջրի որակի տվյալները լիովին համահունչ են եվրոպական տվյալների բազային:

Մշակված ցուցանիշները հնարավորություն են տալիս նաև հանրությանը տեղեկանալ իրենց առօրյա կյանքի և բարեկեցության հիմքում ընկած ջրի մատչելիության և ջրի որակի մասին:

ԷկոՊորտալը նաև կօգնի Հայաստանին իրագործելու տարածաշրջանային և միջազգային պարտավորությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները:

Էկոպորտալում ներկայացված են ինչպես ջրերի վերաբերյալ տվյալները և տեղեկատվությունը, այլև կենսաբազմազանության, մասնավորապես հատուկ պահպանվող տարածքների ցուցանիշի մի բաղադրիչը: ԷկոՊորտալն ունի բավարար տեխնիկական ապահովվածություն առաջիկայում ընդլայնվելու այլ բնապահպանական ոլորտներում:

Լրացուցիչ տեղեկատվություն

ԵՀԳ ՇՄՏՄՆ II Արևելք ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Ծրագիրն իրականացվում է Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (SEIS) համապարփակ սկզբունքներին ու գործառնություններին համապատասխան՝ բնապահպանական տարբեր ոլորտներում: Ծրագիրը հիմնված է նախորդ համագործակցության գործողությունների վրա Արևելյան գործընկերության վեց երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա), որոնք իրականացվել են 2010-2015 թվականների ընթացքում: Այն նպատակ ունի խորացնել ԵՄ հարաբերություններն Արևելյան գործընկերության վեց երկրների հետ և աջակցել շրջակա միջավայրի պաշտպանության խթանմանը՝ հզորացնելով շրջակա միջավայրի կառավարումը: Ծրագիրը կարողություններ է հզորացնում կենսաբազմազանության, ջրի, հողերի, օդի և շրջակա միջավայրի գնահատման ոլորտներում:

ԵՀԳ ՇՄՏՄՆ II Արևելք ծրագիր՝ <https://eni-seis.eionet.europa.eu/east/governance>
Ծրագրի ջրային բաղադրիչը՝ <https://eni-seis.eionet.europa.eu/east/areas-of-work/data/water>
Շրջակա միջավայրի գործակալություն՝ <https://www.eea.europa.eu/themes/water>

Կոնտակտներ՝ Վիկտորիա Գոնչարովա
Victoria.goncharova@eea.europa.eu
+45 33 42 59 39

Twitter handle: @EUenvironment

Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ԵՀԳ ՇՄՏՄՆ II Արևելք) սկզբունքների և գործառնությունների իրականացումն Արևելյան գործընկերության երկրներում